ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ

№ 122/29 «10» 08 2013թ

ԵՊՀ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նպատակ ունենալով իրականացնել ԵՊՀ (2010-2014 թթ.) զարգացման ռազմավարական ծրագրի VI.բ խնդրով նախանշված աշխատանքները, խթանել ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գիտական գրադարանի զարգացումը, ինչպես նաև ապահովել գրադարանի և համալսարանի տարբեր ստորաբաժանումների փոխգործակցությունն ու համագործակցությունը՝

Հրամայում եմ՝

1. Ստեղծել ԵՊՀ գրադարանային խորհուրդ (այսուհետ՝ Խորհուրդ) և հաստատել Խորհրդի կանոնակարգը (կցվում է):
2. Հանձնարարել ֆակուլտետների դեկաններին մինչև 2013 թ. սեպտեմբերի 20-ը ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմից ներկայացնել թեկնածություն՝ Խորհրդում ներգրավելու նպատակով (ֆակուլտետի գիտական խորհրդի առաջարկություն):
3. Հրամանը ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ռեկտոր՝ Ա. Սիմոնյան

Հաստատված է
ԵՊՀ ռեկտորի «10» 08 2013 թ-ի
№ 122ς29 հրամանով

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Երևանի պետական համալսարանի գրադարանային խորհրդի

1. ԵՊՀ գրադարանային խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) ԵՊՀ ռեկտորին կից խորհրդակցական մարմին է, որը ձևավորվում է ԵՊՀ ռեկտորի հրամանով:

2. Խորհրդի նպատակներն ու խնդիրներն են՝

ա) աջակցել ԵՊՀ գիտական գրադարանի ռազմավարական զարգացմանը և դրանից բխող տարբեր ծրագրերի մշակմանն ու իրականացմանը,

բ) քննարկել ԵՊՀ գիտական գրադարանի գործունեության տարեկան ծրագրերն ու դրանց կատարման մասին հաշվետվությունները,

գ) ապահել գրադարանի և համալսարանի հիմնական ուսումնական և գիտական ստորաբաժանումների փոխադարձ կապն ու արդյունավետ համագործակցությունը:

3. Խորհրդի նախագահը ԵՊՀ ռեկտորն է: Խորհուրդն իր կազմից ընտրում է խորհրդի քարտուղար:

4. Խորհրդի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության ԵՊՀ ռեկտորի կողմից՝ տարեկան առնվազն երկու անգամ:

5. Խորհրդի կազմի մեջ են մտնում ռեկտորը, պրոռեկտորները, գիտական քարտուղարը, գրադարանի տնօրենը, ռեկտորի աշխատակազմի ղեկավարը, ուսումնամեթոդական, տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման վարչությունների պետերը, գլխավոր հաշվապահը, ըստ ոլորտների (բնագիտական, ճշգրիտ, հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և հայագիտական) պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչներ (ֆակուլտետների գիտական խորհուրդների կողմից առաջարկված), գրադարանի կոլեկտիվի երկու ներկայացուցիչ (գրադարանի աշխատակիցների ժողովի կողմից առաջարկված), Ուսանողական խորհրդի և Ուսանողական գիտական ընկերության մեկական ներկայացուցիչներ:

6. Խորհրդի կազմը հաստատվում է ԵՊՀ ռեկտորի կողմից՝ 2 տարի ժամկետով (ըստ ոլորտների՝ ֆակուլտետների գիտական խորհուրդների կողմից առաջարկված անձանց ցանկից խորհրդի անդամների ընտրությունն իրականացվում է ռեկտորի կողմից):

7. Խորհրդում որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ: Խորհրդի նիստերն արձանագրվում են, արձանագրության վարումը կազմակերպում է գիտական քարտուղարը:

8. Ռեկտորի հրավերով Խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով, մշտական կամ ժամանակավոր հիմունքներով կարող են մասնակցել համապատասխան կարգավիճակ կամ որակավորում ունեցող մասնագետներ: